Ջեռուցման նպատակով ջերմային էներգիայի մատակարարման պայմանագիր

«06» փետրվարի 2017թ.

պայմանագրի կնքման վայրը՝ ք. Երևան, Կ. Ուլնեցի 68

1. Պայմանագրի կողմերը

Մատակարար / Սպառող

Կազմակերպության անվանումը՝ **««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ**
Փոստային հասցեն՝ **ՀՀ, 0069 ք. Երևան, Կ. Ուլնեցի 68**
Բանկային տվյալներ՝ **«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Զեյթուն մ/6**
Հ/Հ - **163518012543**
ՀՎՀՀ՝ **02602449**
Հեռ.: **(374-10) 24 75 32**

Սպառող

Կազմակերպության անվանումը՝ **«Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ**
Փոստային հասցեն՝ **ՀՀ, 0069 ք. Երևան, Կ. Ուլնեցի 68**
Բանկային տվյալներ՝ **«ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲԸ**
Հ/Հ - **16040056079500**
ՀՎՀՀ – **00802759**
Հեռ.: **(374-10) 24 80 51**

Սպառող

Կազմակերպության անվանումը՝ **ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալություն**
Փոստային հասցեն՝ **ՀՀ, 0069 ք. Երևան, Կ. Ուլնեցի 68**
Բանկային տվյալներ՝ **ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն**
Հ/Հ - **900011102044**
ՀՎՀՀ – **02536701**
Հեռ.: **(374-10) 28 06 55**

Մատակարարը, որը միևնույն ժամանակ հանդիսանում է նաև Սպառող, ի դեմս ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի գործադիր տնօրեն Արմեն Աբրահամյանի, մի կողմից, և Սպառողներ՝ «Աշխատանքի եվ սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Ա. Սարգսյանի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալությունը, ի դեմս

նախարարության աշխատակազմի ղեկավար Ա. Գրիգորյանի, մյուս կողմից, համատեղ կոչվելով Կողմեր կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

2. Սահմանումներ

2.1. **Ջերմամատակարարում կամ ջեռուցում՝** սպառողի տարածքի ապահովումը ջերմությամբ:

2.2. **Ջերմամատակարման համակարգ՝** ջերմամատակարարումն ապահովող սարքերի և սարքավորումների, խողովակների և մարտկոցների համալիր:

2.3. **Կաթսայատուն՝** վառելիքի (բնական գազ) քիմիական էներգիայի օգտագործման հիման վրա տաք ջրի տեսքով ջերմության արտադրության համար նախատեսված սարքերի համալիր:

2.4. **Արտաքին ջերմային ցանց՝** կաթսայատնից մինչև ներքին ջերմային ցանցի մուտքագիծը տեղակայված սնող և հետադարձ խողովակաշարերի համակարգ:

2.5. **Ներքին ջերմային ցանց՝** շենքի տարածքում տեղակայված սնող և հետադարձ խողովակաշարերի (ներառյալ նկուղում) և ջեռուցման մարտկոցների համակարգ:

2.6. **Ջերմային էներգիա՝** էներգիա տաք ջրի տեսքով, որը շրջանառություն կատարելով ջերմամատակարարման համակարգով ապահովում է ջերմամատակարարումը:

2.7. **Ջերմամատակարման խափանում՝** ջերմային էներգիայի մատակարարման (ջերմամատակարարման) դադարեցում կամ սահմանափակում:

2.8. **Մարտկոց՝** Սպառողի տարածքում տեղակայված փաստացի ջեռուցում ապահովող կոնվեկտիվ սարք, որը բաղկացած է որոշակի թվով սեկցիաներից:

2.9. **Սպառողներ՝** Ջերմընդունիչ ունեցող և Մատակարարի հետ ջեռուցման նպատակով ջերմային էներգիայի մատակարարման պայմանագիր՝ կնքված ք. Երևան, Կ. Ուլնեցի 68 հասցեում գտնվող կազմակերպություններ:

2.10. **Հաշվետու ամիս՝** ժամանակահատված, որի ընթացքում կատարվում է ջերմային էներգիայի մատակարարումը և դրա հաշվառումը պայմանագրով սահմանված կարգով:

2.11. **Հանձնման-ընդունման արձանագրություն՝** Մատակարարի կողմից Սպառողին տրամադրվող երկու օրինակից կազմված և կնքված փաստաթուղթ, որում նշվում է հաշվետու ամսվա ընթացքում Սպառողին մատակարարված ջերմային էներգիայի փաստացի ծախսերը և վճարման ենթակա գումարը՝ ամսավճարը:

2.12. **Ամսավճար՝** Հաշվետու ամսվա ընթացքում մատակարարված ջերմային էներգիայի դիմաց վճարման ենթակա գումարը:

3. Պայմանագրի առարկան

3.1. Մատակարարը պարտավորվում է բացառապես ջեռուցման նպատակով Սպառողներին մատակարարել անհրաժեշտ քանակի ջերմային էներգիա, իսկ Սպառողները՝ վճարել սպառված ջերմային էներգիայի դիմաց, Պայմանագրով սահմանված կարգով:

3.2. Պայմանագրով ջեռուցման սեզոն համարվում է մատակարարի կողմից սպառողներին անհրաժեշտ ջերմային էներգիայով ապահովումը:

4. Ջերմային էներգիայի սակագինը և հաշվառումը

4.1. Մատակարարի կողմից մատակարարվող ջերմային էներգիայի մեկ միավորի սակագինը սահմանվում է դրամ/սեկցիա՝ ամսվա ընթացքում ջերմային էներգիայի սպառման համար կատարված փաստացի

ծախսերի հարաբերությունը ջեռուցվող տարածքում տեղակայված մարտկոցների սեկցիաների ընդհանուր թվաքանակի վրա:

4.2. Սպառողներին մատակարարված ջերմային էներգիան հաշվառվում է Սպառողների տարածքում տեղակայված մարտկոցների սեկցիաների թվաքանակը բազմապատկած 4.1 կետով սահմանված 1 միավորի սակագնով: Սպառողների Հավելված 1-ում բերված ջեռուցման մարտկոցների սեկցիաների քանակը սահմանված է եռակողմ կնքված Ակտով (Հավելված 1):

4.3. Ջեռուցման սեզոնի ընթացքում սակագինը կարող է փոփոխվել՝ << հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից բնական գազի, խմելու ջրի, էլեկտրաէներգիայի մատակարարման սակագների փոփոխման դեպքում:

4.4. Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Մատակարարի և Սպառողների միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ:

4.5. Մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 15-ը ջեռուցման համար կատարված փաստացի ծախսերի հիման վրա Մատակարարը Սպառողին է ներկայացնում հաշվետու ամսվա ընթացքում մատակարարված ջերմային էներգիայի համար իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 2) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 2.1):

5. Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները

5.1. Մատակարարի և Սպառողի միջև փոխհարաբերությունները կարգավորվում են սույն պայմանագրով, << քաղաքացիական օրենսգրքով, այլ օրենքներով և իրավական ակտերով:

Մատակարարը պարտավոր է՝

5.2. Ապահովել Սպառողի տարածքի անխափան և անվտանգ ջերմամատակարարումը, պայմանագրի 3.2. կետում նշված ժամանակահատվածի ընթացքում:

5.3. Մինչև ջեռուցման սեզոնի սկիզբը Սպառողների հետ համաձայնեցնել ջեռուցման համակարգի ընթացիկ իրավիճակը:

5.4. Սպառողի տարածքում ջեռուցումը դադարեցնել կամ սահմանափակել միայն վթարի կամ վթարի կանխարգելման անհրաժեշտության պարագայում՝ ներառյալ Սպառողի պահանջով: Վթարները կանխարգելու նպատակով անհետաձգելի միջոցառումների ձեռնարկման անհրաժեշտության դեպքում, որոնք հանգեցնում են ջեռուցման դադարեցմանը կամ սահմանափակմանը, անհապաղ տեղեկացնել Սպառողին:

5.5. Կաթսայատանը վարել գրանցամատյան՝ ջեռուցման սեզոնի ընթացքում ջերմամատակարարման համակարգում տեղ գտած թերությունների, խափանումների վերաբերյալ գրանցումներ կատարելու համար:

5.6. Սպառողի պահանջով 3 օրվա ընթացքում պարզաբանել հաշվետու ամսվա ընթացքում մատակարարված ջերմային էներգիայի համար կատարված փաստացի ծախսերի և ամսավճարի հաշվարկման կարգը: Անհրաժեշտության դեպքում կատարել ամսավճարի վերահաշվարկ:

Մատակարարն իրավունք ունի՝

5.7 Հետաձգել ջեռուցման սեզոնի սկիզբը, եթե սպառողի կողմից կատարվել են վերանորոգման աշխատանքներ, չտեղեկացնելով մատակարարին:

Սպառողը պարտավոր է՝

5.8 Հանձնման-ընդունման արձանագրությունը երկկողմ ստորագրվելուց հետո ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում վճարել ամսավճարը:
5.9 Ներքին ջերմային ցանցում հայտնաբերված անբավարար ջերմատվության և ջեռուցման համակարգի սարքերի, սարքավորումների և խողովակների վթարների վերաբերյալ անմիջապես տեղեկացնել Մատակարարին:
5.10 Չվնասել ջեռուցման սարքերը, չկատարել ջեռուցման համակարգից ջրահեռացում և ջեռուցման համար նախատեսված ջուրը չօգտագործել այլ նպատակներով:
5.11 Ջեռուցման սեզոնի ընթացքում ջեռուցվող տարածքը կամ դրա մի մասը չզբաղեցնելու դեպքում շարունակել վճարել ամսավճարը:
5.12 Ջեռուցման ընթացքում ապահովել սենյակների մեկուսացումը դրսից:
5.13 Պայմանագրի շրջանակներում Մատակարարը հանդիսանում է նաև Սպառող և կրում է նաև Սպառողի համար նախատեսված պարտավորությունները:

Սպառողն իրավունք ունի՝

5.14 Ամսավճարի հաշվարկների հետ անհամաձայնության դեպքում դիմել Մատակարարին պարզաբանումներ ստանալու համար, հաշվետու ամսվա ընթացքում սպառված ջերմային էներգիայի հաշվարկման կարգի վերաբերյալ:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Պայմանագրային պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով կողմերը կրում են պատասխանատվություն Պայմանագրող և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
6.2. Մատակարարի պատասխանատվության տակ գտնվող ջեռուցման համակարգում (կաթսայատուն, արտաքին ջերմային ցանց, նկուղում գտնվող ներքին ջերմային ցանցի մատակարարման օղակ) տեղի ունեցած վթարների կամ վթարների կանխարգելման համար անհրաժեշտ ներդրումները ջեռուցման 2-րդ տարվանից սկսված կատարվում են կողմերի կողմից համամասնորեն՝ Կողմերի տարածքներում տեղակայված մարտկոցների սեկցիաների թվին համապատասխան:

7. Այլ պայմաններ

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման օրվանից, գործում է անորոշ ժամկետով և տարածվում է Կողմերի միջև 2016 թվականի դեկտեմբերի 1-ից ծագած հարաբերությունների վրա:
7.2. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ կողմերի միջև համաձայնություն չկայանալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
7.3. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.4. Սույն պայմանագիրը և հավելվածները կազմված են 8 էջից, կնքվում է երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, 2 և 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8. Կողմերի ստորագրությունները

«Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ

Գործադիր տնօրեն՝ _____ **Արմեն Աբրահամյան**

Կ.տ.

«Աշխատանքի եվ սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ

Տնօրեն՝ _____ **Արման Սարգսյան**

Կ.տ.

<< աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Աշխատակազմի ղեկավար՝ _____ **Արտակ Գրիգորյան**

Կ.տ.

Հավելված 1
«02» 02 2017թ. կնքված
Ջեռուցման նպատակով ջերմային էներգիայի
մատակարարման պայմանագրի

ԱԿՏ

Ք. Երևան, Կ. Ուլնեցի 68 հասցեում գտնվող շենքի ջեռուցման մարտկոցների քանակի վերաբերյալ

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ

Սեկցիաների քանակ 486

Գործադիր տնօրեն՝ **Արմեն Աբրահամյան**

Կ.տ.

«Աշխատանքի եվ սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ

Սեկցիաների քանակ 417

Տնօրեն՝ **Արման Սարգսյան**

Կ.տ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի գբաղվածության պետական գործակալություն

Սեկցիաների քանակ 257

Գործակալության պետ՝ **Արտակ Մանգասարյան**

Կ.տ.

Հավելված 2
«01» 02 2017թ. կնքված
Ջեռուցման նպատակով ջերմային էներգիայի
մատակարարման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
_____	_____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի անվանումը և համարը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.

Մատակարարը՝ ի դեմս «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Աբրահամյանի, և Սպառողը՝ ի դեմս _____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունը համապատասխանում է Պայմանագրով ամրագրված պայմաններին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը «____» «_____» 20 թ. մատակարարել է հետևյալ ծառայությունը՝

N	Մատակարարված ծառայության							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայության մատակարարման վերաբերյալ բոլոր փաստաթղթերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
_____	_____
ստորագրություն	ստորագրություն

Հավելված 2.1
«06» 02 2017 թ. կնքված
Ջեռուցման նպատակով ջերմային էներգիայի
մատակարարման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը սպառողին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Սպառող) և
(սպառողի անունը)
----------ի (այսուհետ՝ Մատակարար) միջև 2016 թ. Դեկտեմբերի 19 -ին կնքված
(Մատակարար անունը)
N ——— գնման պայմանագրի շրջանակներում Մատակարարը 2016թ. ——— --ին հանձնման-ընդունման նպատակով Սպառողին հանձնեց ստորև նշված ծառայությունը.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____

ազգանուն, անուն

_____

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____

ազգանուն, անուն

_____

ստորագրություն